

իր կարգին, անհատին ապրելու նիւթական միջոց մըն է: Այս շարքը կարելի է այս ձեւով անվերջ շարունակել, սակայն Արիստոտելի համաձայն, վերջնական նպատակ մը ունենալու է, որ անհատին մօտ վերջ գտնէ եւ անհատին համար *բարի* ըլլայ: Այդ վերջնական նպատակը կամ *Գերագոյն Բարին՝ երջանկութիւնն* է:

Վերջնական նպատակը կամ **Գերագոյն Բարին**, որպէս *երջանկութիւն* բնորոշելէ առաջ, Արիստոտել Գերագոյն Բարին համար, հետեւեալ ձեւական չափանիշները կը սահմանէ.-

- ա) *Գերագոյն Բարին*, պետք է ինքնաբաւ ըլլայ. այսինքն՝ կախեալ չըլլայ ուրիշ բանէ մը.
- բ) *Գերագոյն Բարին*, պետք է ինքնիրեն համար ըլլայ. այսինքն՝ ուրիշ բան մը իրագործելու համար չըլլայ եւ
- գ) *Գերագոյն Բարին*, կարելի չէ աւելի մեծցնել կամ բարձրացնել՝ այլ բարիք մը վրան աւելցնելով:

Կը մնայ որոշել «*բարի*» հասկացութեան, իրապաշտութեան կամ իրողութեան հետ ունեցած առնչութիւնը: Այստեղ, եթէ նկատի ունենանք առարկայական իրապաշտութիւնը (Objective Realism) եւ հակաիրապաշտութիւնը (Anti-realism), Արիստոտելի տեսակէտը կը գրաւէ յարաբերաբար միջին դիրքաւորում մը: Յստակացնելու համար յիշեալ երկու եզրերը բնորոշենք, որ առարկայական իրապաշտութեան պարագային՝ բան մը մեզի *բարի* կը թուի, որովհետեւ մեր տեսակէտէն անկախ ատիկա ինքնին *բարի* է. իսկ հակաիրապաշտութեան պարագային՝ բան մը *բարի* է, որովհետեւ մեզի այդպէս կը թուի: Այստեղ, տարբերութիւնը կը կայանայ բանի մը՝ «*ինքնին բարի*» կամ «*մեզի համար բարի*» ըլլալուն մէջ:

Բարի ու *չար* հասկացութիւններու մասին, տե՛ս նաեւ «Բարոյագիտութեան Հիմնական Հասկացութիւններ» Մաս – 9ի յատուկ յօդուածը (Էջ 420):

2. ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Լաւ ու բարի կեանքի ու երջանկութեան գաղափարը, Պլատոնի եւ Արիստոտելի համար կը ներկայանայ յունարէն „eudaimonía“ բառով, որ կազմուած է՝ „eu“ (լաւ ու բարի) եւ „daimonios“ (ոգի) մասերէն: Այս իմաստով, *բարի ոգի* հասկացութիւնը, յունական դասական փիլիսոփայութեան մէջ կը նշանակէ նաեւ մարդու հոգեկան առողջութիւնը, սակայն ո՛չ Պլատոն եւ ոչ Արիստոտել հոգեկան կամ մարմնական առողջութիւնը, որպէս բարոյական առաքինութիւն կ'ընդունէին: Այս ենթակայական (Subjective) քաջառողջութեան կողքին, eudaimonía նաեւ կը մատնանշէ առարկայական (Objective) յաջողութեան մը, որ անհատի կեանքին մէջ՝ որոշ նպատակի մը իրականացումն է: Արիստոտելի համար երջանկութիւնը միաժամանակ *Գերագոյն Բարին* է (յուն.՝ to agathón, լատ.՝ summum bonum), երջանկութիւն մը, որ Արիստոտելի բնութագրութեամբ «*կատարեալ եւ ինքնաբաւ բարին է եւ վարմունքի մը վերջնական նպատակը*»: